ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ

ԶԵԿՈՒՅՑ

ԵԹԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՂԱՎԱՐՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵԹԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՂԱՎԱՐՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Ներածություն. սույն արտահերթ զեկույցի անհրաժեշտությունը 3

2) Լրագրողների և լրատվական գործունեություն իրականացնողների բողոքների հիմնական էությունը 5

3) Լրագրողական մասնագիտական աշխատանքը և այդ աշխատանքին վերաբերող հատուկ կանոնների բացակայությունը նոր տեսակի կորոնավիրուսային (COVID-19) համավարակի պայմաններում 9

4) Լրատվական գործունեություն իրականացնողների կամ լրագրողի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց կիրառելու հստակ իրավական հիմքի բացակայությունը 21

5) Լրատվական գործունեություն իրականացնողների մասնագիտական գործունեության նկատմամբ վերահսկողության խնդիրները 24

1) Ներածություն. սույն արտահերթ զեկույցի անհրաժեշտությունը

Լրագրողների և լրատվական գործունեություն իրականացնողների կամ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների[1] մասնագիտական պաշտպանված և արդյունավետ մասնագիտական աշխատանքի պայմանների ապահովումը Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթ ուղղություններից է:

Այն պահից, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հայտարարվեց արտակարգ դրություն նոր կորոնավիրուսային հիվանդության կամ վարակի (COVID-19) հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով, լրագրողական մասնագիտական աշխատանքի, խոսքի ազատության ապահովման հարցերը դարձան Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթ ուշադրության առարկա:

Նախ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ նոր կորոնավիրուսային վարակի կանխարգելումն ու դրա դեմ պայքարը, հանրային առողջության պաշտպանությունն ունի կենսական կարևորություն: Դրա հետ միասին, չեն կարող բացարձակ լինել պետության ձեռնարկած միջոցները վարակի կանխարգելման ուղղությամբ: Ուստի, արտակարգ դրության ողջ ընթացքում Պաշտպանի ուշադրության ներքո են եղել լրագրողական աշխատանքի նկատմամբ պետության միջամտությունները կամ դրանց բնույթը, լրագրողական մասնագիտական աշխատանքի երաշխավորման ուղղված պետության ջանքերը, արագացված կարգով ուսումնասիրվել են լրագրողների մտահոգություններն ու հարցադրումները, մշակվել և ըստ իրավասության՝ պետական մարմիններին են ներկայացվել արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ և այլն: Լրատվական գործունեություն իրականացնող մի շարք կազմակերպություններ, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահը, առանձին լրագրողներ Մարդու իրավունքների պաշտպանին

[1] «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում օգտագործվում է նաև «տեսալսողական ծառայություն մատուցող ձևակերպումը, սակայն սույն զեկույցում՝ որպես ընդհանուր ձևակերպում, օգտագործված է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի «լրատվական գործունեություն իրականացնող» ձևակերպումը:

գործունեություն իրականացնող մի շարք կազմակերպություններ, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահը, առանձին լրագրողներ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են դիմումներ ու բողոքներ, **որոնք առնչվում են եթերի ժամանակ հեռուստատեսային տաղավարում լրագրողների և հարցազրույցի կամ քննարկման հրավիրված հյուրերի կողմից դիմակներ կրելու պարտադիր պահանջին:** Ըստ այդմ, ուսումնասիրությունների ու դիտարկումների հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում արտահերթ զեկույցով հրապարակել արձանագրված խնդիրները, այդ խնդիրների կապակցությամբ իր իրավական դիրքորոշումները և դրանց լուծմանն ուղղված առաջարկները՝ հաշվի առնելով հարցի հանրային կարևորությունը և նոր կորոնավիրուսային (COVID-19) շարունակվող վարակի պայմաններում լրագրողների գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը:

Զեկույցը չի անդրադառնում այն հարցին, թե բժշկական կամ համաճարակային տեսանկյունից ինչ նշանակություն ունի դիմակ կրելը կամ նոր կորոնավիրուսային վարակի կանխարգելման մյուս միջոցները կամ մասնագիտական տեսանկյունից ինչպես պետք է կրել դիմակ և այլն:

Սույն արտահերթ զեկույցում տեղ են գտել առաջարկներ, որոնք վերաբերում են փոփոխություններին ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ գործնականում: Ընդ որում, այդ իրավական դիրքորոշումները ձևակերպված են այնպես, որ կիրառելի են ոչ միայն արտակարգ դրության ռեժիմի նկատմամբ, այլ նաև արտակարգ դրության ավարտից հետո՝ այնքանով, որքանով համավարակի դեմ պայքարի նպատակը շարունակում է իրավաչափ լինել: Այլ կերպ ասած, այս հարցերը շարունակելու են Պաշտպանի ուշադրության լինել նաև արտակարգ դրության ավարտից հետո:

2) Լրագրողների և լրատվական գործունեություն իրականացնողների բողոքների հիմնական էությունը

1. **Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանին են դիմել լրատվական գործունեություն իրականացնող մի շարք կազմակերպություններ, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահը, ինչպես նաև մի շարք լրագրողներ և բարձրացրել են հարց, որն առնչվում է եթերի ժամանակ հեռուստատեսային տաղավարում լրագրողների և հարցազրույցի կամ քննարկման հրավիրված հյուրերի կողմից դիմակներ կրելու պարտադիր պահանջին:**

2. **Ըստ դիմողների՝ եթերի ժամանակ հեռուստատեսային տաղավարում լրագրողների և հարցազրույցի կամ քննարկման հրավիրված հյուրերին վերաբերող դիմակ կրելու պարտադիր պահանջը չունի բավարար հիմնավորում: Բողոքների գլխավոր հարցերից է այն, որ շարունակվող համավարակի պայմաններում լրագրողական մասնագիտական աշխատանքի համար հատուկ ձևակերպված կանոններ առկա չեն և հետևաբար, գոյություն չունի իրավական կոնկրետություն:** Մասնավորապես, Հայաստանի օրենսդրությունը չի պարունակում հստակ իրավական պահանջներ՝ կապված հեռուստատեսային տաղավարում եթերի ժամանակ լրագրողների և հարցազրույցի կամ քննարկման հրավիրված հյուրերի կողմից դիմակ կրելու պարտադիր պահանջի հետ:

3. **Ըստ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների՝ մեր երկրում ներկայում գործող օրենսդրությունը հաշվի չի առնում լրագրողական աշխատանքի առանձնահատկությունները, չկան լրագրողների համար իրենց աշխատանքի կազմակերպմանը վերաբերող կանխատեսելի ընթացակարգեր: Պետական մարմինները կենտրոնանում են միայն դիմակ կրելու պահանջի վրա ու չեն քննարկում կամ անտեսում են նոր տեսակի կորոնավիրուսի (COVID-19) կանխարգելման մյուս կանոնների պահպանման հարցը:** Մինչդեռ, լրատվական գործունեություն իրականացնողներն ու լրագրողները տաղավարներում պահպանում են միջազգայնորեն պահանջվող ֆիզիկական (սոցիալական) հեռավորությունը,

իրականացնում են վարակի տարածման կանխարգելման, այդ թվում՝ ախտահանման հետ կապված բոլոր մյուս միջոցառումները, որը հաշվի չի առնվում: Դրանից բացի, տաղավարում դիմակ կրելու պարտադիր պահանջը, որն ունի ընդհանրական բնույթ, բարդություններ է առաջացնում լրագրողական մասնագիտական աշխատանքի ընթացքում ինչպես հենց լրագրողների, այնպես էլ հյուրերի համար: Ավելին, այդ պարտադիր պահանջն առաջադրվում է այն պարագայում, երբ տաղավարները գրեթե դատարկ են:

4. **Ըստ բողոքների՝ լրագրողական աշխատանքի առանձնահատկությունները հաշվի չառնող ու անորոշ կարգավորումների պատճառով լրագրողների կամ լրատվական գործունեություն իրականացնողների նկատմամբ Ոստիկանությունը հարուցում է անհարկի վարչական վարույթներ, որով դժվարություններ են առաջանում նրանց աշխատանքում: Դա նաև հանգեցնում է լրագրողական աշխատանքին Ոստիկանության անհիմն միջամտությունների:**

5. **Այս հարցը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բանավոր ու գրավոր բողոքներով բարձրացրել են «Արմնյուզ» և «5-րդ ալիք» լրատվական գործունեություն իրականացնողների լրատվական ծառայությունների ղեկավարները: Ըստ նրանց՝ տաղավարում դիմակ չկրելու համար լրագրողներին տուգանելու նպատակով, առանց լրագրողական աշխատանքի զգայունությունը հաշվի առնելու, Ոստիկանության ծառայողները 2020 թվականի հուլիսի 3-ին անհիմն մուտք են գործել իրենց լրատվական գործունեություն իրականացնողների գրասենյակներ, ցուցադրական գործողություններով վնաս են հասցրել թե՛ կազմակերպությունների, թե՛ լրագրողների հեղինակությանն ու բարի համբավին: Ըստ այդ բողոքների՝ Ոստիկանությունը չուներ իրավասություն մուտք գործելու լրատվական գործունեություն իրականացնողների գրասենյակներ: Բացի այդ, այդ կերպ հասարակությունում տպավորություն է ստեղծվել, որ իրավապահ մարմինը մուտք է գործել լրատվական գործունեություն իրականացնողների գրասենյակներ՝ որպես հանցավորության դեմ պայքարի մարմին ու այդ գործառույթների սահմաններում:**

6. Հայաստանի ժուռնալիստների միության նախագահը Մարդու իրավունքների

պաշտպանին ուղղված գրավոր դիմումով նաև ներկայացրել է **թվով 21 լրատվական գործունեություն իրականացնողի** ստորագրությամբ դիմում, որոնք բոլորն էլ վերաբերում են նշված բոլոր խնդիրներին:

7. Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ այն մասին, որ դիմակ կրելու պարտադիր պահանջը խնդրահարույց է բոլոր այն մարդկանց համար, ովքեր հաղորդակցվում են ժեստերի լեզվով: Մասնավորապես, այդ անձանց համար տեղեկություններ ստանալու մատչելիության, այդ տեղեկությունների ընկալման հարցում դժվարություններ են առաջացնում, քանի որ նրանք շուրթերով են կարդում լրագրողի կամ նրա հյուրի խոսքը: Առավել ևս պետք է հաշվի առնել, որ առանց այդ էլ **լրատվական գործունեություն իրականացնողները** ոչ հաճախ են ունենում հնարավորություն՝ ապահովելու հեռուստատեսային ծրագրերի ուղեկցումը ժեստերի լեզվով թարգմանությամբ: Այսինքն՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման հարցում նույնպես առաջանում են խնդիրներ:

8. Նկարագրվածից բացի, Մարդու իրավունքների պաշտպանն ինքն է իրականացրել նշված բոլոր հարցերին վերաբերող հատուկ դիտարկում: Արդյունքները ցույց են տվել, որ լրատվական գործունեություն իրականացնողների և լրագրողների մտահոգության առարկա հիմնական հարցերից է դիմակ կրելու պարտադիր պահանջ ներկայացնելն այն պայմաններում, երբ առկա չէ իրավական կոնկրետություն: Ավելին, հաշվի չեն առնվում լրագրողական աշխատանքի առանձնահատկությունները, ինչպես նաև հարցը չի դիտարկվում նոր կորոնավիրուսի վարակի կանխարգելման մյուս կանոնների համատեքստում (ֆիզիկական (սոցիալական) հեռավորություն, ձեռքերի ախտահանում, օդափոխություն և այլն):

9. Բոլոր դիմումների, լրագրողների բողոքների, ինչպես նաև անկախ դիտարկումների արդյունքների հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է նպատակային ուսումնասիրություն: Վերլուծվել են լրատվական գործունեություն իրականացնողների ու լրագրողների մտահոգությունները, «Արմնյուզ» և «5-րդ ալիք» հեռուստաալիքների գրասենյակներ Ոստիկանության ծառայողների այցերը, դիմակ չկրելու համար իրավախախտում արձանագրելու առնչությամբ Ոստիկանության գործողությունները, այդ առնչությամբ Մարդու իրավունքների

պաշտպանին նշված լրատվական գործունեություն իրականացնողների ներկայացրած պարզաբանումները և այլն: Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ՝ նկարագրված հարցերը քննարկվել են Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ղեկավարի, ինչպես նաև Հայաստանի ժուռնալիստների միության նախագահի, նշված լրատվական կազմակերպությունների ղեկավարներ կազմերի հետ:

10. Այնուհետև, Մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումների պահանջներով գրություններ է հասցեագրել Պարետին, Ոստիկանության պետին, ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահին: Ստացած գրավոր պարզաբանումներն ուսումնասիրվել են ու հիմք են ընդունվել սույն արտահերթ զեկույցը կազմելիս: Դրանից բացի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի հետ տեղի է ունեցել ևս մեկ մասնագիտական քննարկում՝ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ: Քննարկման արդյունքներն արտացոլվել են սույն արտահերթ զեկույցում:

3) Լրագրողական մասնագիտական աշխատանքը և այդ աշխատանքին վերաբերող հատուկ կանոնների բացակայությունը նոր տեսակի կորոնավիրուսային (COVID-19) համավարակի պայմաններում

11. Մարդու իրավունքների պաշտպանը սույն արտահերթ զեկույցի դիրքորոշումների ամբողջականության նպատակով անհրաժեշտ է համարում՝ որպես ելակետ արձանագրել իր սկզբունքային մոտեցումն այն մասին, որ **լրագրողների մասնագիտական աշխատանքը պետք է դիտարկել խոսքի ազատության, երկրում այլակարծության երաշխավորման ու դրանով հանդերձ՝ պետության ժողովրդավարական զարգացման տեսանկյունից:**

12. **Լրագրողական աշխատանքն ունի հանրային մեծ կարևորություն. այն մի կողմից մարդուն հնարավորություն է տալիս պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես են աշխատում պետական մարմինները և այդպիսով վերահսկողություն իրականացնել պետության նկատմամբ, մյուս կողմից՝ ունի իրավապաշտպան բնույթ ու այդ կերպ անփոխարինելի նպաստ է բերում երկրում համերաշխության մթնոլորտի ապահովման, մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդման գործում:**

13. **Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել իր ձևավորած հիմնարար կանխադրույթն այն մասին, որ օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու լրագրողի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության պարտականությունն առաջնորդվելու լրագրողի օրինավորության, նրա բարեխղճության ու ազնվության կանխավարկածով[2]:**

14. **Այս ելակետային հիմնադրույթներով պետք է ղեկավարվի հանրային իշխանության ցանկացած մարմին՝ անկախ նրանից, թե ինչ գործառույթների կրող է և ինչ նպատակներ է իր աշխատանքով հետապնդում:**

15. Լրագրողների գործունեության կարևորության վերաբերյալ ձևավորված են միջազգային հիմնարար չափանիշներ, որոնք նաև մեր երկրի միջազգային

[2] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի իրավական չափանիշներում // https://ombuds.am/images/files/986e87edd62975d1dd1a8a035d509f19.pdf:

պարտավորություններն են: Խոսքն, օրինակ, վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականին, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի չափանիշներին և այլն:

16. Լրագրողական պաշտպանված աշխատանքը երաշխավորելու պետության պարտավորությունը յուրահատուկ բնույթ է ստանում այնպիսի բարդ իրավիճակներում, ինչպիսիք են արտակարգ իրավիճակները, համաճարակները, արտակարգ դրությունները և այլն: Բանն այն է, որ **նման իրավիճակներում մարդու համար լայն ծավալի սահմանափակումներ ու նրա իրավունքներին բարձր աստիճանի միջամտություններ սահմանելը չի նշանակում, թե պետությունը դրանով մարդու նկատմամբ ձեռք է բերում առավելություններ կամ արտոնություններ: Հակառակը՝ պետությունն այդ կերպ ավելի է մեծացնում իր իրավական բեռը, մարդու հանդեպ պատասխանատվության աստիճանն ու ջանասիրության չափանիշը: Սա Մարդու իրավունքների պաշտպանի հիմնարար մոտեցումն է արտակարգ դրության կամ իրավիճակի պայմաններում մարդու և պետության փոխհարաբերությունների, մարդու նկատմամբ պետության պարտավորությունների ու իրավական բեռի տեսանկյունից:**

17. Հենց այս դիտանկյունից մշտապես Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են գտնվել նոր կորոնավիրուսային (COVID-19) վարակի տարածման արդյունքում ՀՀ կառավարության հայտարարած արտակարգ դրության պայմաններում Պարետի կամ այլ իրավական ակտերի կարգավորումները կամ դրանցով նախատեսված սահմանափակումները ու այդ սահմանափակումների գործադրումը պետության կողմից: Պաշտպանի հատուկ ուշադրության ներքո են եղել այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են արտակարգ դրության պայմաններում լրատվական գործունեություն իրականացնողների և լրագրողների մասնագիտական գործունեությանը: Լրացուցիչ ու բնույթով թիրախային ուսումնասիրություններ են

կատարվել՝ կապված սույն արտահերթ զեկույցում նշված լրագրողական դիմումների ու բողոքների հետ:

18. **Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ նոր կորոնավիրուսային (COVID-19) վարակն այնպիսին է, որ դրա պայմաններում լրագրողական մասնագիտական աշխատանքի երաշխավորման հարցերը շարունակելու են լինել Պաշտպանի ուշադրության ներքո նաև արտակարգ դրության ավարտից հետո: Ուստի, սույն արտահերթ զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանի վերլուծություններն ու առաջարկները ներկայացված են հենց այդպիսի հեռահար լույսի ներքո:**

19. Նախ, Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրությունները վկայում են, որ Պարետի որոշումներով գործունեության որոշ տեսակների համար սահմանված են աշխատանքի կազմակերպման, աշխատանքի անվտանգության ապահովման հատուկ կանոններ:

20. **Լրատվական գործունեություն իրականացնողների ու լրագրողների համար մասնագիտական աշխատանքի հատուկ կանոններ Պարետի կամ որևէ այլ մարմնի կողմից սահմանված չեն:** Խոսքը վերաբերում է ինչպես աշխատանքի ընդհանուր կազմակերպմանը, այնպես էլ առանձին պահանջների ապահովմանը լրագրողական աշխատանքում:

21. Այսինքն՝ ստացվում է, որ մեր երկրում գործող կարգավորումների պայմաններում լրատվական **գործունեություն իրականացնողը** կամ լրագրողն իր աշխատանքային պարտականությունները կատարելիս ստիպված է առաջնորդվել միայն ընդհանուր բնույթի կամ գործունեության այլ տեսակների, ոչ իր համար սահմանված կանոններով: Ասվածը վերաբերում է ինչպես տաղավարում դիմակ կրելու պարտադիր պահանջին, այնպես էլ մյուս կանոններին: Այդ կանոններն, իհարկե, հաշվի չեն առնում լրագրողական աշխատանքի առանձնահատկությունները: Այս ամենն էլ իր հերթին լրագրողական աշխատանքում ներգրավված անձանց ու կազմակերպություններին զրկում է կանխատեսելիությունից, ստեղծում է անորոշ վիճակ, հնարավորություն չի տալիս հստակ պատկերացում կազմելու իրենց վարքագծի իրավական հետևանքների մասին:

22. **Ավելին, դիտարկումը վկայում է, որ որևէ պետական մարմին լրագրողների համար չի իրականացրել իրենց մասնագիտական աշխատանքին վերաբերող անհրաժեշտ իրազեկման աշխատանքներ: Առավելագույնը հարցը սահմանափակվել է որևէ պետական մարմնի մեկ կամ երկու ու այն էլ առանձին դեպքերում հակասական հայտարարությամբ կամ էլ իրավական ակտերի բարդ տեքստերի պաշտոնական հրապարակմամբ:** Մինչդեռ, լայն իրազեկման ու պարզաբանող աշխատանքները կարևոր էին՝ հատկապես հաշվի առնելով, որ առանց այդ էլ առկա չեն համավարակի պայմաններում հատուկ կանոններ, չկան աշխատանքի իրավական ուղեցույցեր:

23. **Այս վիճակն անընդունելի է նաև այն առումով, որ անորոշ վիճակում են հայտնվում պետական այն մարմիններն ու պաշտոնատար անձինք (Ոստիկանություն, Տեսչական մարմին և այլն), որոնք պարտականություն ունեն ապահովելու համավարակի դեմ պայքարի նպատակով սահմանված պահանջների պատշաճ կիրառությունը կամ վերահսկողություն իրականացնելու դրանց նկատմամբ: Մասնավորապես, դիտարկումը վկայում է, որ նրանց համար առկա չէ հստակություն, թե ինչպես պետք է իրականացվի այս կամ այն կանոնի կիրառությունը, օրինակ, լրագրողների աշխատանքում:**

24. **Այս վիճակը խնդրահարույց է հատկապես այն տեսանկյունից, երբ քննարկում ենք, թե պատասխանատվության ինչ ընթացակարգեր ու ներգործության կոնկրետ ինչ միջոցներ պետք է կիրառի պետական մարմինը կամ պաշտոնատար անձը կամ արդյոք կոնկրետ իրավիճակներում առկա են իրավախախտման հատկանիշներ լրագրողի կամ լրատվական կազմակերպության արարքում:**

25. Իրավական կոնկրետության, հստակության բացակայությունն էլ վտանգավոր է այն առումով, որ կարող է կասկածի տակ դնել պետական մարմնի կամ պաշտոնատար անձի իրավասության առկայության հարցն առհասարակ (հատկապես, երբ խոսքը վերաբերում է վերահսկողությանը կամ պատասխանատվության միջոցների կիրառությանը):

26. «Արմնյուզ» և «5-րդ ալիք» լրատվական կազմակերպությունների գրասենյակներ Ոստիկանության ծառայողների այցի, նրանց կողմից համապատասխան վարույթի իրականացման և լրագրողներին տուգանելու կապակցությամբ գործողությունները պետք է դիտարկել հենց վերը նկարագրված տեսանկյուններից: Դա է պատճառը, որ այս լրատվական կազմակերպությունների հետ կապված՝ ՀՀ ոստիկանությունն արձանագրություններ է կազմել այն մասին, որ նրանք կատարել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՎԻՎՕ) 182.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցանքներ: Սա ՎԻՎՕ այն հոդվածն է, որը պատասխանատվություն է սահմանում արտակարգ դրության ժամանակ ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման սահմանափակումները խախտելու համար: Ստացվում է՝ Ոստիկանությունը լրատվական գործունեություն իրականացնողներին տուգանել է ընդհանրապես ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման սահմանափակումները խախտելու համար, քանի որ ակնհայտորեն չի ունեցել այլ՝ լրագրողական աշխատանքին առնչվող իրավական հիմք: Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված պաշտոնական պարզաբանումներում Ոստիկանությունը նշել է, որ տուգանել է հենց լրագրողներին: Նույն բնույթի տեղեկությունները, ըստ էության, արձանագրվել են նաև հրապարակային տիրույթում: Այսինքն՝ հանրային ընկալումը եղել է այն մասին, որ տուգանվել են լրագրողներ: Մինչդեռ, իրականում տուգանվել են լրատվական կազմակերպությունները, սակայն խնդրահարույց, ընդհանրական ձևակերպում ունեցող իրավական նորմի կիրառումով:

27. **Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ անթույլատրելի է լրատվական գործունեություն իրականացնողների կամ լրագրողական աշխատանքը զուտ տնտեսական տեսանկյունից դիտարկելը՝ առանց հաշվի առնելու այդ աշխատանքի առանձնահատկություններն ու հանրային նշանակությունը, լրագրողական գործունեության էությունը: Նման մոտեցումն առավել ևս անթույլատրելի է պատասխանատվություն կամ այլ տեսակի պետական ներգործություն ենթադրող իրավիճակներում:** «Արմնյուզ» և «5-րդ ալիք» լրատվական կազմակերպությունների

դեպքում փորձը ցույց է տալիս, որ հենց այդպես էլ Ոստիկանությունը վարվել է՝ չունենալով աշխատանքի այլ իրավական հիմք (այն, թե արդյոք ճիշտ էր Ոստիկանության այցը լրատվական գործունեություն իրականացնողների գրասենյակներ, առանձին քննարկման հարց է և ներկայացվում է սույն զեկույցի հետագա շարադրանքում):

28. **Ուստի, նոր տեսակի կորոնավիրուսային վարակի կանխարգելման միջոցառումների շրջանակում պետության քաղաքականությունը պետք է ուղղված լինի հատկապես լրագրողական աշխատանքից բխող և այդ գործունեությունն իրականացնող կազմակերպությունների ու անձանց հատուկ կարգավիճակն ընդգծող կարգավորումներ նախատեսելուն: Հատուկ կարգավորումների անհրաժեշտությունը բխում է նաև լրագրողական աշխատանքին հարգանքով վերաբերվելու, այդ աշխատանքի անխոչընդոտ իրականացումը երաշխավորելու հիմնարար գաղափարից[3]:**

29. Նման հատուկ կարգավորումների անհրաժեշտությունը նաև կարևոր է նկարահանման հրապարակներում, տաղավարներում, հեռուստաթերների ընթացքում և առհասարակ լրագրողական գործունեություն իրականացնելիս դիմակ կրելու պարտադիր պահանջը լրատվական գործունեություն իրականացնողներին, լրագրողներին մատչելի ձևով ներկայացնելու համար: Ընդ որում, պետք է հաշվի առնել ոչ միայն դիմակ կրելու, այլ նաև վիրուսի կանխարգելման մյուս պահանջները:

30. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այնուամենայնիվ, գոյություն ունի լրագրողական մասնագիտական գործունեությանն առնչվող հատուկ կանոններ ամրագրելու փորձ: Այդ գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ տարբեր երկրներում մշակվել են COVID-19-ի պայմաններում հեռուստատեսության կամ այլ տեսակի լրատվական կազմակերպությունների աշխատանքին վերաբերող ուղեցույցներ:

---

[3] Խոսքն անհրաժեշտ է նշել, որ խոսքը չի վերաբերում լրատվական գործունեություն իրականացնող այն աշխատողներին, որոնց գործունեությունը լրագրության հետ անմիջականորեն կապ չունի ու նրանք իրականացնում են վարչա-տնտեսական կամ տեխնիկական բնույթի գործառույթներ (օրինակ՝ հաշվապահ, անվտանգության ծառայության աշխատակից և այլն):

31. Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում Կառավարությունը տարբեր հեռուստաընկերությունների հետ համատեղ մշակել է հեռուստատեսային արտադրության ուղեցույց՝ «Արտադրության մեջ Կորոնավիրուսի (COVID-19) ռիսկի կառավարումը» վերտառությամբ[4]:

32. Այդ ուղեցույցով նախատեսված են դիմակ կրելուն վերաբերող չափանիշներ. անհատական պաշտպանիչ միջոցներ, այդ թվում՝ դիմակ կրելը պարտադիր է, եթե նկարահանումներն իրականացվում են բարձր ռիսկային գոտիներում, օրինակ՝ հիվանդանոցներում: Բրիտանիայի ֆիլմերի հանձնաժողովն առանձին ուղեցույց է մշակել COVID-19-ի պայմաններում ֆիլմերի արտադրության ընթացքում անվտանգ կանոնների վերաբերյալ[5]:

33. Ֆիլմերի և հեռուստատեսության արտադրության ընթացքում անվտանգ կանոնների վերաբերյալ ուղեցույցներ են առկա նաև Ավստրիայում[6], Բելգիայում[7], Իռլանդիայում[8], Ֆինլանդիայում[9]: Ընդ որում, գրեթե բոլոր ուղեցույցներով անհատական պաշտպանիչ միջոցներ, այդ թվում՝ դիմակներ կրելու պարտականություն նախատեսված է միայն, երբ աշխատանքային տարածքում հնարավոր չէ այլ անձանցից պահպանել ֆիզիկական (սոցիալական) հեռավորություն:

34. Միջազգային ոչ կառավարական կազմակերպություններից մեկը՝ Լրագրողների պաշտպանության կոմիտեն, ներկայացրել է կորոնավիրուսի բռնկման պայմաններում լրագրողների աշխատանքում կիրառության ենթակա հատուկ նախազգուշական միջոցներ (թարմացվել է 2020 թվականի օգոստոսի 14-ին): Կոմիտեն ընդգծել է, որ դիմակների ճիշտ օգտագործումը հատկապես կարևոր է լրագրողների համար, ովքեր ռեպորտաժներ են պատրաստում բնակչության շրջանում, ինչը կարող է

---

[4] https://downloads.bbc.co.uk/mediacentre/tv-production-guidance-managing-the-risk-of-coronavirus-in-production-making-v1.pdf

[5] http://britishfilmcommission.org.uk/wp-content/uploads/2020/07/British-Film-Commission-Working-Safely-During-COVID-19-in-Film-and-High-end-TV-Drama-Production-V.2.2-17-07-20-1.pdf

[6] https://www.viennafilmcommission.at/en/content/download/26511/file/COMEBACK_WorkingConcept_FilmTV_29052020.pdf

[7] https://screenflanders.be/documents/62/Sector_specific_guidelines_COVID-19_JC_227.pdf

[8] https://www.screenproducersireland.com/sites/default/files/resources/ftvd_v1.2.pdf

[9] https://apfi.fi/wp-content/uploads/Recommended-guidelines-for-production-during-COVID-19-26March2020-ENG-1.pdf

վերաբերել փակ տարածքներ, մարդաշատ տարածքներ մտնելուն, ինչպես նաև հասարակության անդամների հետ խոսելուն[10]:

35. Միջազգային փորձը ևս գալիս է հիմնավորելու հատուկ կանոնների անհրաժեշտությունը լրագրողական գործունեության ոլորտում: Եվս մեկ անգամ անհրաժեշտ է նշել, որ հայաստանյան հեռուստատեսային արտադրության ոլորտում սահմանափակումների, այդ թվում՝ դիմակ կրելու կամ չկրելու պահանջի պարտադիրության հարցում առաջացած անորոշությունն ակնհայտորեն պայմանավորված է լրագրողական աշխատանքին առնչվող հատուկ կարգավորումների կամ ուղեցույցների բացակայությամբ: Ակնհայտ է, որ այդ անորոշությանը նպաստել է նաև այն, որ պետության կողմից լրագրողներին ուղղված հստակ ուղերձներ չեն եղել ու ավելին՝ եղած պաշտոնական հայտարարությունները կամ ուղերձները եղել են հակասական ու ոչ հստակ:

36. Անգամ ընդհանրական բնույթի կարգավորումներն են խնդրահարույց և մատչելի չեն լրագրողների համար:

37. Այսպես, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառության ենթակա ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ Պարետի 2020 թվականի մայիսի 3-ի N 63 որոշման հավելված N 1-ով նախատեսվել են ժամանակավոր սահմանափակված տնտեսական գործունեության տեսակները և գործունեության այդ տեսակներից բացառությունները: Դրանք Պարետի որոշման մեջ արտացոլելիս հիմք է ընդունվել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը հաստատելու մասին» (ՏԳՏԴ) N 874-Ն հրամանը:

38. Էկոնոմիկայի նախարարի այդ հրամանն ունի հավելված, որում առկա է «Տեղեկատվություն և կապ» վերնագրով առանձին հատված: Այս հատվածն ունի «Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն» վերտառությամբ բաժին, որն իր հերթին ներառում է «59.11 - *Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն*», «59.12 - *Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային*

[10] https://cpj.org/ru/2020/03/post-130/?fbclid=IwAR3jib0mrHjfF3q81FwBmwa25WH_rx3vWGlyu9tHpdf665Nyp5pgOJetdZM

ծրագրերի հետարտադրական գործունեություն» ենթաբաժինները: Պարետի նշված որոշման մեջ նշված են Էկոնոմիկայի նախարարի հավելվածի հենց այս կարգավորումները:

39. Նշված ենթաբաժիններում օգտագործվող «Հեռուստատեսային ծրագրերի արտադրություն», «հետարտադրական գործունեություն» ձևակերպումներից տպավորություն է ստեղծվում, թե լրագրողական գործունեությանը վերաբերող այդ հասկացությունների բովանդակությունը բացահայտված է և դա ներառում է, օրինակ, հեռուստատեսային նորությունները, հեռուստատեսային քննարկումները, ժամանցային ծրագրերը, բանավեճերը և այլն: Մինչդեռ, Էկոնոմիկայի նախարարի հրամանի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա այդպես չէ. «Հեռուստատեսային ծրագրերի արտադրություն» ձևակերպման բովանդակությունն ընդհանրապես բացահայտված չէ: Ավելին, օրինակ, նորությունները, ժամանցային ծրագրերը, կամ հեռուստատեսային բանավեճերը «Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն» ենթախմբում ներառված էլ չեն: Այսինքն՝ Պարետի որոշմամբ սահմանված սահմանափակումից բացառությունն ունի «Հեռուստատեսային ծրագրերի արտադրություն» ձևակերպումը, բայց թե ինչ է դա նշանակում, բացահայտված չէ:

40. Նշվածից բացի, Էկոնոմիկայի նախարարի հրամանում առանձնացված «Տեղեկատվություն և կապ» վերնագրով (J) մեծ հատվածը, որն էլ հենց արտացոլված է Պարետի որոշման մեջ, նշվածից բացի՝ ներառում է նաև այնպիսի բաժին, որը վերնագրված է «Հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում»: Այս բաժինը, սակայն, թեև մտնում է «Տեղեկատվություն և կապ» վերնագրով (J) մեծ հատվածի մեջ, սակայն ավելի կոնկրետացված ուսումնասիրության դեպքում պարզ է դառնում, որ Պարետի որոշմամբ ամրագրված սահմանափակումներից բացառությունների մեջ չի մտնում: Իրականում, սա չափազանց կարևոր է, քանի որ այդ բաժնում են բացահայտված լրագրողական գործունեությանն առնչվող մեզ անհրաժեշտ հասկացությունները:

41. Այս հատվածը, մասնավորապես, Էկոնոմիկայի նախարարի նույն հրամանի համաձայն՝ «ներառում է հեռուստառադիոծրագրերի՝ նորությունների, ժամանցային

ծրագրերի, բանավեճերի ու համանման այլ ծրագրերի կազմման և հեռարձակման կամ տարածման իրավունքով ձեռքբերված պատրաստի հեռուստառադիոծրագրերի հեռարձակման հետ կապված գործունեությունը: Այստեղ ներառվում է նաև տվյալների փոխանցումը, սովորաբար, երբ այն իրականացվում է հեռուստառադիոհեռարձակման համակարգում: Հեռուստառադիոհեռարձակման համար օգտագործվում են տարբեր տեխնոլոգիաներ՝ եթերի, արբանյակային կապի, մալուխային ցանցի կամ ինտերնետի միջոցով: Այս հատվածը ներառում է նաև սահմանափակ լսարանի համար նախատեսված նորությունների, սպորտային մրցումների, կրթական, երիտասարդական և համանման այլ ծրագրերից ամբողջական ծրագրի բնօրինակի կազմումը երրորդ կողմի համար՝ բաժանորդային կամ վճարային կարգով հեռարձակման նպատակով»:

42. Այս պայմաններում առավել ընդունելի կլիներ Պարետի որոշման մեջ որևէ ձևով ներառել «Տեղեկատվություն և կապ» հատվածում առկա բովանդակությունն այնպես, որ նորմի գործողության հասցեատիրոջ համար միանշանակ և հստակ հասկանալի լիներ, թե այդ ենթախմբերում և ենթատեսակներում ներառված գործունության որ տեսակներն են սահմանափակման ենթակա կամ որոնք են բացառություն կազմում: Առանց այն էլ թե՛ Պարետի որոշումը, թե՛ առավել ևս Էկոնոմիկայի նախարարի հրամանն առանձնանում են բարդ ձևակերպումներով:

43. Նշվածի հետ կապված՝ հետաքրքիր է, որ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է նաև, որ Էկոնոմիկայի նախարարի հրամանում տեղ գտած այս կարգավորումները «Եվրոպական տնտեսական համայնքում տնտեսական գործունեության տեսակների վիճակագրական դասակարգումը»[11] վերտառությամբ փաստաթղթից մեխանիկական թարգմանություն են:

44. Եթե կոնկրետ ոլորտային նորմատիվ ակտով՝ Էկոնոմիկայի նախարարի հրամանով նման բարդ դասակարգումները և եզրութաբանությունը կարող են սկզբունքորեն ընդունելի լինել, նկատի ունենալով, որ դա մասնագիտական հենք ունեցող փաստաթուղթ է, որի հասցեատերը կոնկրետ նման գործունեություն իրականացնողներն են, ապա այլ մարմինների որոշումները, որոնք ուղղված են հասարակության լայն շերտին, պետք է լինեն առավելագույն մատչելի և որոշակի:

[11] https://ec.europa.eu/eurostat/documents/3859598/5902521/KS-RA-07-015-EN.PDF

45. Սույն զեկույցի այս հատվածում Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այս պահին գործող կարգավորումներին: Այսպես, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների և կանոնների վերաբերյալ Պարետի նոր՝ 2020 թվականի օգոստոսի 18-ի N 253-Ն որոշմամբ սահմանվել է բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս հանրային բաց տարածքներում դիմակ կրելու պարտադիր պահանջ՝ բացառությամբ մի քանի դեպքերի: Գործող կարգավորմամբ՝ դիմակ կարող են չկրել հեռուստահաղորդավարները, եթե հեռուստահաղորդումների և հեռուստածրագրերի հեռարձակման ժամանակ հեռուստատեսային տաղավարում գտնվում են մենակ, ինչպես նաև հեռուստահաղորդումների հեռարձակման ժամանակ սուրդոթարգմանություն իրականացնող մասնագետները:

46. Նոր կարգավորումից պարզ չէ, սակայն, թե ինչ է նշանակում «տաղավարում գտնվում են մենակ» կամ կոնկրետ ում է դա վերաբերում: Բանն այն է, որ հեռուստատեսային տաղավարում նկարահանման պահին մեկնաբանից կամ հաղորդավարից բացի գտնվում են այլ աշխատակիցներ ևս, օրինակ՝ օպերատորներ: Պարզ չէ, թե այս եզրույթը ներառում է տաղավարում միայնակ գտնվելը, թե հեռուստադիտողի համար տեսանելի հատվածում միայնակ գտնվելը: Չի բացառվում, որ, օրինակ, հեռարձակման ժամանակ հեռուստահաղորդավարին 1.5 մետր հեռավորությունից մոտ գտնվի նաև այլ աշխատակից, սակայն հեռուստադիտողի համար դա տեսանելի չլինի: **Ուստի, եթե հարցը դիտարկում ենք համավարակի կանխարգելման զուտ առողջապահական տեսանկյունից, ապա այս կարգավորման արդյունավետությունը թվում է խնդրահարույց:**

47. **Առհասարակ, ոլորտը կարգավորող նորմատիվ ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից իրականում սահմանված են բարդ կամ հստակության բավարար աստիճան չունեցող ձևակերպումներ, որոնք լրագրողական մասնագիտական հանրության շրջանում կարող են անորոշություն առաջացրել (առանձին դեպքերում՝ դրանք արդեն առաջացրել են): Այս մասին ակնհայտորեն վկայում են նաև**

լրագրողների մոտ առկա ընկալումները, որոնք նաև հակասական են հենց առկա կարգավորումների պատճառով:

48. Սրա հետ միասին, ողջունելի է, որ սուրդոթարգամանություն իրականացնող մասնագետներն այլևս ազատ են դիմակ կրելու պարտականությունից, սակայն այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանի համոզմամբ, առկա է մեկ այլ խնդիր:

49. Ստեղծված իրավիճակում կարևոր է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, նրանց համար տեղեկությունների մատչելիության ապահովումը: Գործնականում այսօր դժվարություններ են առաջանում այս անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքի երաշխավորման հարցում:

50. Ներպետական կարգավորումներն այնպիսին են, որ սուրդոթարգամանությամբ զուգորդման պահանջ ներկայցվում են խիստ սահմանափակ քանակով հեռուստահաղորդումներ: Բացի այդ, հեռուստահաղորդումների զգալի մասը չի ուղեկցվում սուրդոթարգամանությամբ:

51. Հանրամատչելի աղբյուրների ուսումնասիրությունը վկայում է, որ լսողության խնդիրներ ունեցող անձինք ինչ-որ չափով կարողանում են խոսակցության բովանդակության վերաբերյալ տեղեկություն ընկալել խոսողի շրթունքներին նայելու միջոցով: Այն դեպքերում, երբ զուգահեռ չի իրականացվում սուրդոթարգամանություն, դիմակ կրելու պարտադիր պահանջ նախատեսելով փաստացի լսողության խնդիրներ ունեցող անձինք զրկվում են անգամ նվազագույն տեղեկություն ստանալ բոլոր այն հաղորդումներից, որոնք սուրդոթարգամանություններով չեն զուգորդվում:

52. Ի դեպ, նշված հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Պարետին, պարզվել է, որ Առողջապահության նախարարությունը Պարետին առաջարկել է հեռուստատեսություններում սուրդոթարգմանությամբ հեռարձակվող հաղորդումների ընթացքում դիմակ կրելու բացառություն սահմանել: Պաշտպանի դիրքորոշմամբ, սակայն, բարձրացված հարցերը սրանով միայն մասնակի լուծում են ստանում:

4) Լրատվական գործունեություն իրականացնողների կամ լրագրողի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց կիրառելու հստակ իրավական հիմքի բացակայությունը

53. Ցանկացած տեսակի իրավական, այդ թվում՝ վարչական պատասխանատվության հիմքն իրավախախտում, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որը պարունակում է համապատասխան օրենքով նախատեսված իրավախախտման բոլոր հատկանիշները:

54. Այս համատեքստում Պաշտպանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածը, որով նախատեսվում է պատասխանատվություն արտակարգ դրության իրավական ռեժիմի կանոնները խախտելու համար, առկա չէ առանձին դրույթ, որը լրագրողի կամ լրատվական կազմակերպության նկատմամբ պատասխանատվություն է նախատեսում դիմակ չկրելու համար:

55. Հնարավոր երկու իրավական նորմերը, որոնք կիրառվում են այս հիմքով վարչական վարույթ հարուցելիս ՎԻՎՕ-ի 182.3-րդ հոդվածի 1.1-րդ և 2-րդ կետերն են: Դրանցից առաջինը պատասխանատվություն է նախատեսում արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում ազատ տեղաշարժվելու պայմանները, պահանջները խախտելու, իսկ մյուսը՝ արտակարգ դրության ժամանակ ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման սահմանափակումները խախտելու համար:

56. ՎԻՎՕ-ի 182.3-րդ հոդվածի 1.1-րդ կետով դիմակ կրելն, ըստ էության, դիտարկվում է որպես արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում ազատ տեղաշարժվելու պայման, պահանջ, որը կիրառելի չէ հեռուստաթեթեր դուրս եկած լրագրողի կամ մեկնաբանի նկատմամբ: Ընդ որում, ՎԻՎՕ-ի այս հոդվածի ձևակերպումն ինքնին խնդրահարույց է, քանի որ դրա անորոշ ձևակերպումը թույլ է տալիս իրավախախտման օբյեկտիվ կողմի մեջ ներառել ամենատարբեր արարքներ՝ դրանով իրավակիրառողին, կոնկրետ դեպքում՝

Ոստիկանությանը տալով կիրառության ժամանակ մեկնաբանության չարդարացված լայն հայեցողություն:

57. Ինչ վերաբերում է ՎԻՎՕ-ի 182.3-րդ հոդվածի 2-րդ կետին, ապա այն պատասխանատվություն է սահմանում արտակարգ դրության ժամանակ առհասարակ ֆինանսատնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման սահմանափակումները խախտելու համար: Այս առնչությամբ պետք է արձանագրել, որ «Արմնյուզ» և «5-րդ ալիք» հեռուստաալիքների նկատմամբ տուգանք կիրառելիս Ոստիկանությունը, փաստորեն, նրանց գործունեությունը դիտարկել է սովորական ֆինանսատնտեսական գործունեություն: Այսինքն, ստացվում է, որ իր գործունեությունից բխող աշխատանք կատարելիս լրագրողը և լրատվական գործունեություն իրականացնողների մյուս՝ այդ գործունեության հետ չկապված աշխատակիցների գործունեությունը դիտարկվել է միևնույն հարթության մեջ:

58. **Նշված հոդվածների ձևակերպումները չունեն բավարար այնպիսի հստակություն, որ համապատասխան սուբյեկտները հնարավորություն ունենան իրենց վարքագիծը համապատասխանեցնել օրենքի պահանջներին և կանխատեսել օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքները: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում չի նախատեսվել հատուկ նորմ, որի դիսպոզիցիայից անձի համար պարզ կլիներ հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը (դիմակ չկրելը) և նման վարքագիծ դրսևորելու դեպքում հնարավոր պատասխանատվության աստիճանը. դա նախատեսված է Պարետի որոշմամբ:**

59. **Ուստի, այս դեպքում խնդրահարույց վիճակ է ստեղծվում այն առումով, որ առհասարակ, դիմակ կրելու պարտադիր պահանջը չպահպանելու համար նախատեսված պատասխանատվությունն օրենքով ամրագրված հստակ հիմք չունի: Այլ կերպ ասած, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը կամ որևէ այլ օրենք դիմակ չկրելու համար պատասխանատվություն չի նախատեսում, այդպիսի կոնկրետ ձևակերպում որևէ օրենքում նույնպես առկա չէ՝ որպես իրավախախտում ու այդ իրավախախտման համար նախատեսված պատասխանատվության միջոց: Ստացվում է՝ այդ հարցը օրենքը թողել է Պարետի**

որոշմանը՝ սահմանափակվելով ընդհանրական բնույթի ձևակերպմամբ իրավախախտում ամրագրելով: Օրինակ՝ ինչպես կարող է «արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում ազատ տեղաշարժվելու պայմանները խախտելը» դիտարկվել որպես միայն կամ հենց դիմակ կրելու պարտադիր պահանջի խախտում: Սա, իհարկե, անընդունելի է, քանի որ կոնկրետ արարքի դիսպոզիցիան պետք է նախատեսվի օրենքի մակարդակով:

60. Այս պրակտիկան վտանգավոր է առհասարակ մարդու իրավունքների ու այդ իրավունքների ապահովման երաշխիքների տեսանկյունից: Բանն այն է, որ ստեղծված նախադեպի ուժով օրենքները կարող են ինչ-որ ոլորտի ընդհանրական ձևակերպմամբ կարգավորումներ նախատեսել, իսկ հետո օրենքից ցածր իրավական ուժ ունեցող ակտերով արդեն կոնկրետացնել կոնկրետ իրավախախտումների հատկանիշները:

5) Լրատվական գործունեություն իրականացնողների մասնագիտական գործունեության նկատմամբ վերահսկողության խնդիրները

61. Հայաստանի Սահմանադրության 12-րդ գլուխը սահմանում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործունեությունը մեր երկրում: Ըստ այդ գլխում ներառված 196-րդ հոդվածի՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը: Ըստ նույն հոդվածի՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

62. Հանձնաժողովը, «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն, ի թիվս այլնի, ունի նաև Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում իրականացնելու լիազորություն:

63. Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների որոշ դեպքերում Հանձնաժողովին վերապահված է վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավական հնարավորություն:

64. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այլ երկրներում ևս առկա են ոլորտի անկախ, ինչպես նաև գործադիր մարմնի կազմում գործող մարմիններ, որոնք իրենց իրավասության շրջանակում ընդունում են կարգավորիչ նորմատիվ իրավական ակտեր, լրատվական գործունեություն իրականացնողների նկատմամբ կիրառում են պատասխանատվության միջոցներ:

65. Օրինակ, Ֆրանսիայում[12] լրատվական կազմակերպությունների վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի՝ Աուդիովիզուալի գերագույն խորհուրդը (Conseil supérieur de l'audiovisuel - CSA), որն անկախ պետական մարմին է: Այն իր իրավասությունների շրջանակում, ի թիվս այլնի, ապահովում է գործող օրենսդրության և կանոնակարգերի պահպանումը բոլոր օպերատորների կողմից և իրավասու է պատժել խախտում կատարածներին:

66. Իտալիայում[13] Կապի կարգավորման մարմինը (Autorità per le Garanzie nelle Comunicazioni) անկախ ղեկավար մարմին է, որն իրականացնում է կարգավորող և վերահսկիչ գործառույթներ հեռահաղորդակցության, հեռուստատեսության, թերթերի և փոստային ծառայությունների ոլորտներում: Այս մարմինը ձևավորում է երկրորդային օրենսդրություն (ենթաօրենսդրական ակտեր)՝ էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ինտերնետ ցանցերի, հեռուստա և ռադիո ծառայությունների ոլորտում: *Եվրոպական էլեկտրոնային հաղորդակցությունների միասնական շուկայի չափանիշներին է համապատասխանեցում տեղական շուկան տվյալ ոլորտում, իրականացնում է մշտական վերահսկողություն և մոնիթորինգ:* Իտալիայի օրենսդրության և ԵՄ դիրեկտիվների պահպանման, ինչպես նաև մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության ոլորտում այս *մարմինը համագործակցում է Իտալիայի իրավապահ և այլ մարմինների հետ:*

67. Ռուսաստանի Դաշնությունում[14] Կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների և զանգվածային հաղորդակցության վերահսկողության դաշնային ծառայությանը վերահսկողության ոլորտում լայն լիազորություններ ունի: Այն, գտնվելով ՌԴ կապի և զանգվածային լրատվության նախարարության ենթակայության տակ, վերահսկողություն է իրականացնում լրատվական կազմակերպությունների հնարավոր բոլոր տեսակների գործունեության նկատմամբ: Այս մարմինը *ընդունում է համապատասխան կարգավորիչ ենթաօրենսդրական ակտեր և կարգավորիչ*

---

[12] https://www.csa.fr/, http://www.rirm.org/en/list-of-the-member-authorities/csa-conseil-superieur-de-laudiovisuel/

[13], https://www.agcom.it/, https://www.agcom.it/documents/10179/10886381/Documento+generico+08-06-2018/9cd1e205-06f4-4122-b525-495adfc78938?version=1.1, https://uk.practicallaw.thomsonreuters.com/4-619-1727?__lrTS=20200502151322746&transitionType=Default&contextData=(sc.Default)&firstPage=true

[14] http://docs.cntd.ru/document/902147695, https://rkn.gov.ru/, https://rkn.gov.ru/mass-communications/p840/

նորմատիվ իրավական ակտեր, ՌԴ օրենսդրությանը համապատասխան *սահմանում է գործողության ոլորտային չափանիշներ և չափորոշիչներ ՀԼՄ-ների գործունեության համար:* Սեփական նախաձեռնությամբ կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց բողոքների հիման վրա կարող է իրականացնել կոնկրետ լրատվական կազմակերպությունների վերաբերյալ քննություն (ստուգումներ, հետազոտություններ և այլն), իր *սահմանած չափանիշներին կամ ՌԴ օրենսդրությանը չհամապատասխանող կամ հակասող գործողություն իրականացնելու դեպքում* կախված խախտման ծանրությունից իրավասու է՝ կիրառել պատասխանատվության տարբեր միջոցներ:

68. Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող սահմանադրական և օրենսդրական պահանջները վկայում են, որ Հայաստանում Հանձնաժողովը ևս ունի լիազորություններ՝ կապված ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտեր ընդունելու, ինչպես նաև պատասխանատվության միջոցներ կիրառելու հետ: Ավելին, ինչպես վերը նշվեց, սա սահմանադրական ուղղակի հիմքեր ունեցող իրավասություն է. խոսքը վերաբերում է ակտեր ընդունելուն:

69. **Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ այն պայմաններում, երբ երկրում առկա է նման լիազորություններով ու այն էլ սահմանադրական մակարդակով ամրագրում ստացած իրավական կարգավիճակով օժտված մարմին, այն է՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով, անընդունելի է Հանձնաժողովի համար նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված սահմանափակումների կիրառման հարցում անհրաժեշտ լիազորություններ չվերապահելը:** Հանձնաժողովն է այս ոլորտի մասնագիտական հիմնական մարմինը, ուստի հենց նա է օժտված նաև անհրաժեշտ մասնագիտական կարողություններով ու լրատվական գործունեություն իրականացնողների, լրագրողների հետ աշխատանքի անհրաժեշտ հմտություններով: Այլ հարց է, որ նոր կորոնավիրուսային համավարակի պայմաններում հանձնաժողովը պետք է ունենա լրացուցիչ մասնագիտական հմտություններ. դրա հնարավոր բացակայությունն էլ, սակայն կարող է պայմանավորված լինել նրանով, որ Հանձնաժողովին վերապահված չեն անհրաժեշտ լիազորություններ:

70. Հանձնաժողովը պետք է ունենա համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում ու նաև արտակարգ դրությունից հետո հատուկ կանոններ կամ չափանիշներ սահմանելու իրավասություն, որոնք կվերաբերեն լրագրողական գործունեության կազմակերպմանն ու իրականացմանը: Հանձնաժողովն ինքը պետք է իրավասություն ունենա իրականացնելու այդ կանոնների պահպանության նկատմամբ վերահսկողություն ու անհրաժեշտության դեպքում՝ կիրառել պատասխանատվության միջոցներ: Խոսքը հավասարապես վերաբերում է նաև հեռուստաեթերի ընթացքում դիմակ կրելու պահանջի հետ կապված հարցերին ու դրա հետ կապված՝ պատասխանատվության միջոցներ կիրառելուն: Նման դիրքորոշում է հայտնել նաև Հանձնաժողովի նախագահը Մարդու իրավունքների պաշտպանի հետ քննարկումների ընթացքում:

71. Ուստի, անընդունելի է հատուկ կարգավիճակով օժտված (և սահմանադրական մակարդակում ամրագրված) մարմնի առկայության պայմաններում որևէ այլ մարմնի ու առավել ևս Ոստիկանության կողմից նման որևէ տեսակի իրավասություն իրականացնելը: Այս արձանագրումն առավել ևս արդիական է՝ հաշվի առնելով, որ այդ մարմինները չունեն հստակ ամրագրում ունեցող նման լիազորություններ (հնարավոր խախտումներ վեր հանելու նպատակով հեռուստատեսության աշխատանքը մշտադիտարկման ենթարկելը, հեռուստատեսության գրասենյակ այցելելը և այլն):

72. **Այս առումով, «Արմնյուզ» և «5-րդ ալիք» լրատվական գործունեություն իրականացնող կազմակերպությունների գրասենյակներ Ոստիկանության այցն այդ կազմակերպությունների գործունեության բնականոն ընթացքը խաթարելու և մասնագիտական գործունեությանը միջամտության իրական վտանգ է ստեղծում կամ առերևույթ այդպիսի վտանգի տպավորություն է առաջացնում: Դրանից բացի, հարց է առաջանում՝ ինչու էր Ոստիկանությունն այցելում լրատվական գործունեություն իրականացնողների գրասենյակ, եթե ՀՀ օրենսդրությունը վարչական իրավախախտման մասին արձանագրությունը դրա կատարման վայրում կամ վարույթի մասնակիցների մասնակցությամբ կազմելու ուղղակի պահանջ չի նախատեսում:**

73. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի՝ որպես ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ պետական մարմնի կողմից նման վարչական վարույթ իրականացնելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու դեպքում լրագրողների մասնագիտական գործունեությանը միջամտության ռիսկը կհասցվի նվազագույնի:

74. Միաժամանակ, հաշվի առնելով, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի՝ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություններից կարող է օգտվել միայն օրենքով ուղղակի նախատեսված լինելու դեպքում, կարծում ենք՝ առավել նպատակահարմար կլինի լրատվական կազմակերպությանը պատասխանատվության ենթարկելու իրավասությունը վերապահել Հանձնաժողովին, և այդ նպատակով ստեղծել նորմատիվ հենք՝ հնարավորին հստակ իրավական կարգավորումներ նախատեսելով «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով: Կարծում ենք՝ նման կարգավորումները լիովին համահունչ կլինեն նաև նոր օրենքի տրամաբանությանը: